**«Հետաքննող լրագրողներ»** հասարակական կազմակերպություն
Երեւան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219, 094 40 46 24,
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

---

10.03.2017թ.

ՀՀ Վայոց Ձորի մարզպետ
Հարություն Սարգսյանին

Հարգելի պարոն մարզպետ, հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9 և 12-րդ հոդվածների պահանջները, խնդրում եմ տեղեկատվություն տրամադրել այն մասին, թե Վայոց Ձորի մարզպետարանի աշխատակազմից (ներառյալ՝ մարզպետը, փոխմարզպետերը) քանի աշխատակից/պաշտոնյա է արձակուրդ վերցրել (կամ այդ մասին դիմում ներկայացրել)՝ նախընտրական այս շրջանում որեւէ կուսակցության քարոզչությանը, նախընտրական շտաբների աշխատանքների մասնակցելու նպատակով:
Խնդրում եմ տրամադրել տվյալ պաշտոնյաների/աշխատակիցների ցանկը եւ պաշտոնը:
Ինչպես նաեւ՝ խնդրում եմ տրամադրել այն պաշտոնյաների/աշխատակիցների ցանկը, որոնք այս պահին կամ առաջիկա մեկ-մեկուկես ամսվա համար ներկայացրել են արձակուրդի մասին դիմում՝ անկախ պատճառներից:
Խնդրում եմ տրամադրել տվյալ պաշտոնյաների/աշխատակիցների ցանկը եւ պաշտոնը:

Կանխավ շնորհակալություն,

«Հետաքննող լրագրողներ» էլեկտրոնային
պարբերականի լրագրող
Գագիկ Աղբալյան

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 1486
13. 03 2017թ